ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Փետրվարի 25-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների Ակադեմիայի տարեկան ժողովը, որը նվիրված էր Ակադեմիայի 1947 թվի գիտական գործունեության արդյունքների ամփոփմանը և 1948 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանի հաստատմանը։

Ժողովին ներկա էին Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամները, թղթակից-անդամները, Ակադեմիայի ինստիտուտների դիրեկտորները, գիտական աշխատողները։

Ներածական խոսք ասաց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1947 թվի աշխատանքների արդյունքների և 1948 թվի հետազոտական աշխատանքների պլանի մասին զեկուցեց Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Գուլքանյանը։

Նա իր զեկուցման մեջ մեկ առ մեկ թվեց առանձին ինստիտուտների 1947 թվի ձեռք բերած հաջողությունները։

Խոսելով քիմիական ինստիտուտի մասին, նշեց, որ քիմիական գիտությունն իր տեսական և գործնական արդյունավետությամբ ետ է մնում քիմիական արդյունաբերության զարգացումից, որ քիմիայի ինստիտուտը, քիմիկոսները կապված չեն արդյունաբերության հետ։

Կարևոր աշխատանք է կատարվում ջրա-էներգետիկ ինստիտուտում. «Սևանի լճի մակերևույթի իջեցման հետ կապված բնական երևույթների ուսումնասիրությունը» պրոբլեմի գծով ուսումնասիրված է լճի մակերևույթի իջեցման ազդեցությունը Զանգու գետի ավազանում գտնվող աղբյուրների ջրի դինամիկայի վրա, հաստատված է, որ վերին խմբի աղբյուրները կապված են լճի հետ, մինչդեռ ներքին խմբի աղբյուրները, որոնք կարևոր են Արարատյան դաշտավայրի ջրամատակարարման համար, լճի հետ կապված չեն։

Այնուհետև զեկուցողը խոսեց բիոլոգիական գիտությունների բաժանմունքի աշխատանքների մասին։

Լավ է աշխատել երկրագործության ինստիտուտը։ Այստեղ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանը ստացել է եգիպտացորենի արժեքավոր երկու նոր ձև, որոնցից մեկը բազմացվել է Արտաշատի շրջանի Այգեշատ գյուղի կոլխոզում։ Մեկ հեկտարից ստացվել է 53 ցենտներ հատիկ, իսկ մյուս տեսակը այս տարի բազմացվելու է ռեսպուբլիկայի մի շարք կոլխոզներում։ Բացի այդ, ընկ. Թումանյանը հացաբույսերի ձևառաջացման պրոցեսների ուսումնասիրության ընթացքում ստացել է նաև ցորենների նոր տեսակներ։ Այդ հնարավորություն է ստեղծում լուծել կարծր ցորենների մշակման պրոբլեմը բարձր լեռնային շրջաններում, մի բան, որ մինչև այժմ չեն մշակվել լեռնային վայրերում։ Երկրագործության ինստիտուտը օգտակար աշխատանք է կատարել գիտության և սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար, սակայն այս ուղղությամբ կան թերություններ, գյուղատնտեսության պրակտիկան հաճախ առաջ է անցնում գիտությունից։

Գինեգործության և խաղողագործության ինստիտուտի աշխատանքների մասին խոսելով, զեկուցողը ասաց. Ինստիտուտում լուրջ կերպով չեն մշակվում խաղողի ագրոտեխնիկայի հարցերը, որի հետևանքով գինեգործության և խաղողագործության ինստիտուտը չի կարողացել լուրջ ազդեցություն ունենալ մեր ռեսպուբլիկայի գինեգործության և խաղողագործության վրա։

Այնուհետև անցնելով հասարակական գիտությունների բաժանմունքի աշխատանքներին, զեկուցողը մանրամասն նշեց Համկ(բ)Պ Կենտկոմի 1947 թվի օգոստոսի 27-ի պատմական որոշումների, ինչպես նաև ՀԿ(բ)Պ Կենտկոմի «Հայաստանի պարտիական կազմակերպությունում իդեոլոգիական աշխատանքը բարելավելու միջոցառումների մասին» ծրագրային որոշումը Ակադեմիայի վերոհիշյալ բաժանմունքի աշխատանքներում իրագործելու մասին։ Զեկուցողը նշեց, որ այս որոշումները մեծ խնդիրներ առաջադրեցին Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի առաջ։ Մեր աշխատանքներում հայտաբերվեցին լուրջ թերություններ, մեր պատմության անցյալի իդեալականացման, ինչպես նաև եվրոպական ռեակցիոն կուլտուրայի առաջ ստորաքարշության փաստերի առկայության հարցում։ Հասարակական գիտությունների բաժանմունքը պետք է լուրջ ուշադրություն դարձնի սովետական թեմատիկայի հարցին։ Այնուհետև ընկ. Գուլքանյանը հանգամանորեն նշեց գրականության, պատմության, լեզվի ինստիտուտների և փիլիսոփայության, տնտեսագիտության և արվեստի պատմության ու տեսության սեկտորների աշխատանքներում եղած թերությունները և այն միջոցառումները, որ ձեռնարկել է ՀԿ(բ)Պ Կենտկոմը այդ թերությունները վերացնելու ուղղությամբ։

Այնուհետև ընկ. Գուլքանյանը մանրամասն խոսեց Գիտությունների Ակադեմիայի առանձին բաժանմունքների, ինստիտուտների 1948 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանի մասին։

Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն։ Ելույթ ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գր. Ղափանցյանը, Ալ. Հակոբյանը, Ալ. Թամամշյանը, Հ. Թունիաթյանը, Ար. Շահինյանը, թղթակից անդամներ Գ. Դավթյանը, Ա. Ղարիբյանը և տեխնիկական գիտությունների թեկնածու Կ. Ստակը։ Ելույթ ունեցավ Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

Ելույթ ունեցողները նշեցին այն թերությունները, որոնք գոյություն ունեն Ակադեմիայի առանձին ինստիտուտներում։ Հատկապես խոսում էին այն մասին, որ անհրաժեշտ է սերտ կապ ստեղծել գործարանների հետ։ Նրանք պահանջում էին կապ պահպանել Միության այլ ռեսպուբլիկաների ակադեմիաների, ինչպես նաև ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի առանձին ինստիտուտների, առանձին գիտնականների հետ։ Ելույթ ունեցողները միաժամանակ քննադատում էին կադրերի ընտրության հարցում գոյություն ունեցող թերությունները, հատկապես ասպիրանտների ընտրության, նշելով, որ հաճախ պատահական մարդիկ են ընդունվում ասպիրանտուրա, որոնք գիտա-հետազոտական աշխատանքի ունակություններ չեն ցուցաբերում։

Ակադեմիայի ընդհանուր ժողովը հաստատեց 1948 թվի գիտա-հետազոտական աշխատանքի պլանը։